

Թաւուտին մէջ թեւաբաց, ահա՛, տեսիլդ է կայներ.  
Այծտերեւին հոտեւան մատերն հերթըդ կը շոյեն,  
Ու տերեւներ վեհերոտ կու տան իրենց համբոյրներ:

Մառախուղով կը լենայ հիր շրջագիծն երագիս,  
Ուր ամբարձիկ մարմինիդ հըպարտ շուշանն է կեցեր.  
Յոգւոյդ կարմիր կարօտին, ա՛հ, պատարա՛գ ըրէ գիս:

Ապրիմ-մեռնիմ մը ձեռքըս՝ նորէն դաշտերն ես ինկայ  
Ու տենչանքներըս գրկած լացի մարմինդ ըսպիտակ.  
Դարձիս՝ ճամբան՝ սառե՛ր էր՝ տամուկ՝ լո՛յս ու լուսինկայ...

## 6. ՍԻՐԵՐԳ

Տրցակ մը յուսամ ու տրցակ մը ուրց  
Բե՛ր, ձեռքերովդդ դիր գոյգ քունքերուս  
Խուցիս մէջ ցանէ իւղեր հինաւուրց:

Դափը ձեռքս առնեմ նորէն այս գիշեր,  
Ու ձիւն լոյսին հետ հոգւոյս ցրցքնէ  
Բամբիռի ծափեր, վարդի թերթ ու շեր:

Բամբիռի ծափեր, վարդի թերթ ու շեր,  
Բուրեան շոգիներ յամպար ու մուշկի,  
Որ կ'երփնագօծեն երեկուան յուշեր:

Քիչ մը թեֆարիգ, քիչ մը վարդի ջուր,  
Արեւ ծիծաղի, ծաղիկ ծամերու,  
Չարդոսկիներու բազմաճաճանչ հուր:

Եւ համբոյր անսիւթ, եւ համբոյր անանց  
Վարդով գծգծուած անհուպ շուրթերու  
Կուսածին այգեր՝ փաղփուն լուսացանց:

Անուրջի ցայտքեր, ըղձակաթ գիծեր,  
Դո՛ւք, շարժուձեւեր կաքաւ ու պարի՛  
Յոգիս բանտեցիք դղեակին մէջ ձեր: